



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020 թվականի թիվ 81-Ա

ք. Երևան

ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵԹԵՐԱԺԱՄԱՆԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 12-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և 32-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

28 օգոստոսի 2020թ.
ք. Երևան

**ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՍ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ
ԿԱՍ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՊԱՇՏՈՆԵ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐԵՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՇՏՈՆՅԱՅԻՆ ԵԹԵՐԱԺԱՄԱՆԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ
ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Սույն կարգով սահմանվում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային եթերաժամանակ հատկացնելու կարգի և պայմանների հետ կապված իրավահարաբերությունները:
2. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից եթերաժամանակի հատկացման պայմանը վարչապետի կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյայի կողմից տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողներին դիմելու փաստն է:
3. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները պարտավոր են վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային յուրաքանչյուր եթերային ժամում տրամադրել առնվազն 5 (հինգ) րոպե եթերաժամանակ՝ պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար:
4. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները պարտավոր են օրվա ընթացքում կատարված պաշտոնական հաղորդագրություններից առնվազն երկուսը հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:
5. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների տեղեկատվության սահմանափակումները կիրառվում են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով սահմանված շրջանակներում: